

THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 34

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՅՈՂՆԻՍ, 2 1898

ԳԻՆ 3 ՍԵՆՐ

ՀԵՌԱԳԻՐ ՎԵՂ. ՀԱՅՐԻԿԵՆ

Ամենայն Հայոց Հայրապետ՝ Վեգ. Հայրիկ քաղաքիս Աղզ. Հոգաբարձու թեման Ատենայեան Տ. Թովման-ճեանի յղած է հետեւեալ հեռագիրը...

Թովմանճեան, 343 Պրոտուէյ, Նիւ Եորք. Նիւ Եորքի և Ուսթըրի Լուսաւորչական Հայերը շատ անգամներ եպիսկոպոս մը խնդրած են Ամերիկայի համար...

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Վաղը Կիրակի կէսօրէ վերջ, ժամը մէկին, եկեղեցական արարողութիւններէ վերջ՝ ընդհանուր ժողով մը պիտի ըլլայ Ս. Ոսկերբան եկեղեցւոյ մէջ...

ՊԱՍՍՈՒՆ ԿԼԱՍՍԻՆԻ ԸՆՏԱՆԻՔԵՆ

Հեռեկայն ընդունուեցաւ շարժու մէջ (Ուաշինկթընի անգլիական դեսպանէն) ի պատասխանի այն համակրանաց հեռագրին...

Ուաշինկթըն, Տ. Ք. Թովմանճեան, Հայկունի, Յանճեանու մը:

Մր. Կլաւտըսթոնի ընտանիքը իւր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ իր ընդունած համակրանաց հեռագրին համար...

Յունիս 25ին Արթ. Տէր Մաշթոց Վարդապետն ալ հետեւեալն ստացաւ ի պատասխանի Ուսթըրի քաջուած հեռագրին:

«Մր. Կլաւտըսթոնի ընտանիքը իր խորին շնորհակալութիւնը կը մատուցանէ ձեր համակրական հեռագրին համար որ արժանացաւ ջերմ գնահատութեան»:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմը դանդաղ կ'ընթանայ. շարժում մէջ նշանաւոր դէպք մը չի պատահեցաւ տակաւին: Զօրավար Շաֆթըրի բանակը բաւական տեղ գրաւած է Բիւպայի մէջ ու այժմ Սանթիակոյի մօտերը բանակած կ'սպասէ: Մովսիսը Ըշէյ և Սամսըն ամեն տեղ են Բիւպայի ջուրերուն մէջ...

Չունիս 25 — Զորեղաբերի երեկոյ Զօր. Շէֆթըրի զօրքերն գրաւեցին զՏաբլուրի, ուրկէ սպանիացիք փախան մազապուր:

Թէքաս մարտանաւը Սօքրաթի բերդերն ուժեղացած ատեն ծանր վնաս կրեց թշնամիի կրակէն: Այս առթիւ մէկ մարդ մեռաւ և ուրիշ մը վնասուեցաւ նաև ունի մէջ: Սպանիացւոց կորուստը յայտնի չէ:

Երկիւղ կայ Սանթիակոյի մէջ թէ սպանիական զօրքերն՝ դժգոհ և քաղցած՝ թերևս ապստամբին կառավարութեան դէմ: Մովսիսը Մէրվէրայի նաւերէն շատ մը թնդանօթներ ցամաք կանուած են՝ քաղաքի պաշտպանութեան համար:

Բիւպայի յեղափոխականաց Կուսակցանայի պարագլուխներէն Լապօրտ կը հեռագրէ ճունթայի թէ ճակամարտի մը մէջ սպանիացիք 60 հոգի կորսնցուցած են:

Քաղաքիս Ոստիկանական Քօմիսիոնի նախորդ նախագահ, և նաևային գործոց օգնական նախարար Թէոտոր Բուզվէլթի կազմած հռչակաւոր հեծելազոււնը՝ որ մասամբ մեծատուններէ կը բաղկանար, ճակատամարտ մ'ունեցաւ Սանթիակոյէ 5 մղոնի շափ հեռի՝ մացառոտ տեղւոյ մը վրայ: Սպանիացիք որք մացառներու մէջ պահուած էին և թըռուով շատ մը մղուեցան ծանր կորուստով: Ամերիկացիք ունեցան 16 մեռեալ և 60է աւելի վիրաւոր: Մեռնողներու մէջ են զնդապետ Քէյփըրն և մի քանի ուրիշ պաշտօնեայնի, ինչպէս նաև Համիլթըն Ֆիլ, քաղաքիս նոյնանուն միլիտանտիքը որդին:

Սպանիոյ երեսփոխանական ժողովը փակուեցաւ բարձրագոյն հրամանաւ. բայց ըստ սովորականին՝ ի պատիւ գահունե ծափահարութիւններ չ'եղան ընտել:

Զօրավար Քամբօս, Սպանիոյ հռչակաւոր քաղաքագէտն, ըսած է թէ Ազատականներն եթէ գործէ քաջուին, ու Պաշտպանողականներն չուզեն կառավարութեան պատասխանատուութիւնն իրենց վրայ առնել, ինք՝ Սպանիոյ պատիւն պահելու համար՝ անձամբ գործին գլուխը չ'պիտի

անցնի, ինչպէս որ ըրաւ 1874ին՝ երբ, Բարլիսթներն ու հասարակապետականներն հանդարտեցնելով՝ ներկայ թագաւորին հայրը գահ բարձրացուց: Գերմանիոյ Ուաշինկթընի դեսպանը կը վստահացնէ կառավարութիւնը թէ Գերմանիա ո'ւ է դժուարութիւն չի պիտի յարուցանէ ի միջիւրին: Միւս կողմէ Ուիլիամ կայսեր զրահանաւք օրէ օր կը բազմանան ի Մանիլայ՝ 40 գերմաններու շահերն պաշտպանելու համար:

Մովսիսը Մօնթէճօ, Մանիլայի սպանիական նաւատորմի իր նրամաւորները, որուն համար լուսեցաւ թէ կրակի բռնուած էր Սպանիացւոց կողմէ, ողջ է տակաւին, կամ յարութիւն առած է թերևս: Մօնթէճօ իր պարտութիւնը կը վերագրէ եղեր Սպանիական Կառավարութեան անհոգ վարմանը: «Բանիցս զօրաւոր նաւեր ու թօրփէտօներ խնդրեցի, բայց ոչինչ եկաւ» ըսած է պարտեալ ծովակալն:

Բիւպայի մէջ մեռնող զօրքերու մարմիններն որոշուած է Միացեալ Նահանգներն փոխադրել՝ թաղելու համար:

Մովսիսը Քամբօսի նաւատորմի իրը, որոյ մէջ մէկ նշանակութիւն ունեցող պատերազմանաւ մը միայն կայ, Փորթ Սախի առջև է այժմ: Եգիպտական կառավարութիւնն մերժած է անուիս տալ սպանիական այս նաւատորմի ին, որ եթէ Սուէզէն անցնի ու ճամբայ ելնայ դէպի Յիւրիս, ինչ որ հաւանական կը թուի, Ամերիկայէ զօրաւոր նաւախու մը ճամբայ պիտի ելնէ՝ սպանիական եզերքները ուժեղացնելու համար: Մովսիսը Քամբօսայ 12 կտոր նաւուն իր հետ, և անոնց համար 260 հազար տղար վճարելու է՝ Սուէզի ջրանցքէն անցնելու համար՝ իրրեւ տուրք:

Չունիս 26—27 — Մովսիսը Տուվիլ օգնութեան գնաց երրորդ խումբ մ'ալ մի քանի փոխադրանաւերով: Ասթըրի թընդանօթաձիգ գունդն ու Զօրավար Մէրիթ մի քանի օրէն հազիւ պիտի կրնան ճամբայ ելնել՝ Մանիլայ երթալու համար:

Զօր. Շէֆթըրի քիւպայի գիւնակիցներն կ'ամբաստանուին իրրեւ ծոյլ և անհոգ մարդիկներ:

Չունիս 28—29 — Զօր. Շէֆթըրի բանակը պիտի կրկնապատկուի Սանթիակոյի վրայ յարձակելէ առաջ. կ'ըսուի թէ Լսպանիացւոց զօրութիւնն կարծուած էն շատ աւելի է Բիւպայի մէջ:

Համբանայի մէջ ժողովուրդը երկու կրակի մէջ բռնուած է. Պլանքօ կ'սպառնայ եղեր կրակի բռնել այն մարդը որ յանգքնի դժգոհութիւն յայտնել:

Լա Բուպիտայի ճակատամարտին մէջ, ուր մեծ դեր կատարած էր Բուզուէլթի գունդը, կ'ըսուի թէ սպանիացիք ունեցած են 77 մեռեալ և 89 վիրաւոր: Մատրիտէն լուր կուգայ թէ այդ կուռն մէջ սպանիաց

ւոց կորուստը եղած է միայն 8 մեռեալ և 14 վիրաւոր: Որն է ճշմարիտը:

Վերջի Լուրեր

Համանայի պաշարումը Նախագահի հրամանաւ 500 մ'յոն ևս տարածուած է դէպի Հարաւ. Բէյի Զըրանիլի և Բէյի Բրուքսի եզերքներէն սկսեալ մինչև Սան Ժանի նաւահանգիստը:

Սէնթ Փօլ օժանդակ թնդանօթանաւը Սան Ժանի մօտերն եղած ատեն, Սպանիական Թէրըր թօրփիւնաւը փորձեց պայթեցնել զայն. բայց նաւապետ Սիկսպիլի ուսմբերը յաջողեցան վանել սպանիացին կէս ընկղմած վիճակի մէջ:

ՄԱՀԱԳՈՑԺ

Ցաւ ի սիրտ կը լսենք թէ Տ. Մ. Փորթուգալեանի դուստրը Օր. Արմենուհի Փորթուգալեան, 17 տարեկան ծաղիկ հասակին մէջ իւր մահկանացուն կնքած է ի Մարտէյլ, ամսոյս 8ին, կարճատե հիւանդութենէ յետոյ:

Թաղումը անդի ունեցեր է քաղաքին Ս. Բիէն գերեզմանատան մէջ:

Հ Ր Ա Ի Է Ր

Նիւ Եորքի Հայաստանեաց Եկեղեցւոյ դպրաց դասը կը խնդրէ լաւ ձայն ունեցող երիտասարդներէն գալ և ընկերանալ խմբիս: Դպրութեան վարժ չեղողներուն յատկապէս դաս պիտի տրուի:

Մասնաւորապէս կը խնդրուի ծընողքներէ որ իրենց մանր տղաքներն ալ շրկեն՝ դպրաց դասուն միանալու համար: Ամէն ջանք չի պիտի խնայուի անոնց՝ դպրութիւն ուսուցանելու համար:

Արարողութիւնը կ'ըսկսին ամեն Կիրակի, կէսօրէն յետոյ, ժամը 1ին, Ոսկերբան եկեղեցւոյ մէջ, 39րդ փողոց Դր. Կաթիլիանիէն:

Ի դիմաց Դպրաց դասուն Մ. ԹԱՇՃԵԱՆ Դպրապետ

ԿՈՐՍՈՒՍ ԵՒ ԳԻՏ

Մօլընէն Յ. Ոսկերճեան (Պօսթըն Բըպըր Շու Քօ.) կը գրէ թէ Պօլոս Պուպուճեան (իւր ալ բարեկամն) Պօսթըն կը գտնուի: Վերջի 3-4 տարիներու մէջ քանիցս հանդիպած է Մանուկ Ամու անուն անձին, բայց մերժած է միշտ իր հասցէն առաջ:

Սերաստիոյ Տուգասար գիւղէն, Մալխաս Մալխասեան անուն 20-21 տարեկան, միջնահասակ անձի հասցէն կը փնտրուի: Դիպրոցներն հաճին լուր տալ խմբագրութեանս:

Պ. Յ. Ոսկերճեան (Մօլըն) կը ծանուցանէ թէ Գէորգ Թորոսեան անուն անձին ուղղեալ նամակ մը կայ իր քով, շատ կը փափաքի իր տիրոջ յանձնել՝ եթէ այս վերջինս լուր տայ իրեն:



ՇԱՐԱԹԱԹԵՐԻՍ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ  
 Կը հրատարակուի մէկ անգամ օրեր,  
 ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:  
 Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, . . . . . ԳԱՆՉԱՊԵՏ.  
 ԲԱԺԱՆՈՐԳՍԳՐՈՒԹԻՒՆ  
 ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ  
 ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ  
 ՏԻ. ՍԹ. Տարեկան 10 ֆրանք.  
 Տարեկան 1 50  
 Վեցամսեայ 75 Բաժանորդագինն ԿԱՆՈՒԿ  
 Եւամսեայ 40 վճարելի է միշտ:  
 Ծրար կամ նամակ ուղղել Հետեւեալ Հասցէին՝  
 To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

Նիւ Եորք, ՇԱՐԱԹ, ՅՈՒՆԻՍ 2 1898.  
 Ս Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Բ

Յաւալի է տեսնել թէ ոճրա-  
 գործութիւնք սկսած են ի-  
 րարու յայտրել Միացեալ  
 Նահանգաց գաղթականութեանց մէջ: ՏԻԳՐԻՍԻ վերջի թիւե-  
 րը արձանագրած են արդէն կարգ մը այնպիսի քառանկի  
 դէպքեր, որք մարդուս պէգանք ու դարձող կը պատճա-  
 ւեն: Հայր մը՝ գարգացեալ(?) արարած մը՝ իւր մանուկ  
 դուստրը կ'առնանք ի նիւ Հէյլըն. Յօլ Ռիվըրի մէջ  
 աճուսնացեալ ու գաւակաց տէր մէկը օտարուհիի մը հետ  
 աճուսնացեալ կ'ընէ, և վերջերս գործարանէ մը կտաւ  
 գողցած լինելու ամբաստանութեամբ կը ձերբակալուի իբր  
 գող. երրորդ մը նիւ Եորքէ կը փախի օտարուհիի մը հետ՝  
 իր կինն ու զաւակը երեսի վրայ ձգելով: Հայ մը 10 տա-  
 րի բանտարկութեան կը դատապարտուի ի Փորձիտէնս.  
 ձէրգի մէջ ապօրինի ամուսնութիւն մը տեղի կ'ունենայ՝  
 Հակառակ երկրի և եկեղեցոյ օրինաց, և սասնց նման  
 շատ մը մեծ ու փոքր ոճիրներ կը գործուին ամեն օր այլ  
 և այլ կողմեր. և մենք Հայերս ալ տակաւին կը յանդըք  
 նինք պարծենալ թէ Միացեալ Նահանգաց Հայ գաղթա-  
 կանութիւններու մէջ դեռ չկայ ոճրագործ մը:

Արդար ամեն ազգ իր շարագործներն ունի. վարդը  
 առանց փուշի չ'ըլլար. ո՛չ ոք կրնայ ակնկալել որ ժողո-  
 վըրդի մը բոլոր անհատները հրեշտակներ ըլլան. բայց երբ  
 մերինն պէս պատիկ գաղթականութիւն մը այսչափ դէպ-  
 քեր կ'ստեղծէ, ի հարկէ արատ կը բերէ զնդհանուր ազգի  
 անուան ու պատուոյն: Չգո՛յ ըլլանք:

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԵՒ ՑԱՆԿ  
 Ընթերցողք դիտած են անշուշտ թէ վերջերս շատեր  
 ՏԻԳՐԻՍԻ միջոցաւ սկսած են այսինչ կամ այնինչ անձի  
 ասցէն ու տեղը փնտռել՝ վճարեալ ծանուցումներով: Ա-  
 շեւորք է ըսել, թէ նիւթական շահ մ'է այս ՏԻԳՐԻՍԻ  
 համար: Բայց և այնպէս ցաւալի պակասի մը դէմ մի  
 կենդանի բողոք է ինքնին: Ինչո՞ւ համար այսչափ ազգա-  
 լին ընկերութիւններ, յատուկ եկեղեցիներ ու 15000ի չափ  
 ժողովուրդ ունենալէ յետոյ, թուահամար մ'ու գէթ ա-  
 նուններու ձեռագիր գիրք մը չունենցանք: Այսպիսի հա-  
 տորէ մը ո՛չ միայն կարելի պիտի ըլլայ փնտռուած մէկը  
 գտնել շատ անգամ, այլ կարելի պիտի ըլլար գիտնալ,  
 թէ որչափ Հայ ունինք Ընթըլ Սամի երկրին մէջ: Այս  
 մասին պատասխանատուութեան մեծ մասը կը ծանրանայ  
 անշուշտ Ուսմըրի եկեղեցոյ վարչութեան վրայ. բայց և  
 այնպէս նուազ մեղադրելի չեն միւս հայաշատ քաղաք-  
 ներու ազգային ընկերութիւններն ու եկեղեցոյ վարչու-  
 թիւնք:

Սակայն Ամերիկացոց ըսածին պէս «երբէք ուշ չէ»  
 սկսելու համար: Արդարեւ գործին դժուարութիւնները շատ  
 են, բայց և այնպէս յաջողութիւնն ալ նուազ միտիթա-  
 րութիւն մը չէ աշխատողին համար:

Ներկայ պարագաներու տակ այսպիսի ձեռնարկ մը ը-  
 նելու ամենէ յարմար մարմինը՝ քաղաքիս Բարեգործական  
 Ընկերութիւնն է, որ մէկէ աւելի դիւրութիւններ ունի՝  
 այսպիսի գործ մը ի գլուխ հանելու համար:

Ամօթ է Ամերիկայի մէջ կորսուիլ. աւելի ամօթ է  
 կորսուած հասցէ մը գտնելու համար լոկ լրագրական ծա-  
 նուցումներու դիմել:

ԹԱՆԳԱՐԱՆ  
 Թանգարանի Միութիւնն նոր ընթերցարան մ'ալ բա-  
 ցաւ: Սկսելը գործին կէսն է կ'ըսեն. բայց մեր թանգա-  
 րանի գործոց մէջ՝ սկսելը գործին վերջը եղաւ առջի  
 ընթերցարանի բացման ժամանակ: Կը յուսանք սակայն որ  
 այս երկրորդ ընթերցարանին կիանքը առաջինին պէս կարճ  
 ու սպարդիւն չ'ըլլար:

ՀՈՂ ԳՆԵԼՈՒ ԽՆԻՒՐ

Մեր Հայրենակիցներէ ոմանք կը լսենք թէ այս վերջե-  
 րու քաղաքիս մօտերը հող գնելու տենդէ մը բռնուած  
 են: Շատեր գլխիչ ծանուցումներու ու գործակալաց մեղ-  
 րենի խօսքերէ հրապուրուելով՝ այս յանդուգն քաղք կ'առ-  
 նեն եղեր, սա համոզմամբ թէ շարաթը պատիկ գումար  
 մը միայն վճարելով՝ մի քանի տարիէն արժէքաւոր կտոր  
 մը հողի տէր կ'ըլլան. . . և կը հարստանան դիւրութեամբ:

Մեր նպատակն չէ խրատել մեր ընթերցողները, որ  
 անշարժ կալուած չի գնեն հոս. բայց պարտականութիւն  
 կը սեպենք խորհուրդ տալ սասնց՝ զգոյշ ըլլալ այս մասին  
 և շատ զգոյշ: Ամերիկացիք, անոնց փորձառուներն իսկ,  
 շատ ու շատ անգամ ծանր ֆիւսաներու կ'ենթարկուին այս  
 առևտուրի մէջ, վասն զի հողի առևտուրը ամենէ դժուար-  
 իննն ու խարուսիկն է, մանաւանդ մեծ քաղաքներու մօ-  
 տերը:

Մեր Հայրենակիցներն երբ այսպիսի փորձ մ'ընելու  
 կ'ենեն, թող նախ փորձառու և առևտուրին մէջ շահ չ'ու-  
 նեցող անձանց խորհուրդն ու գաղափարը առնեն: Ամեն  
 փայլուն բան սակի չէ. իսկ այս կարգի առևտուրներու մէջ՝  
 ամեն բան ապակիի կտոր է ընդհանրապէս:

Չեր գրամը, որ դառն քրտանց արգիւնք է, դիւրու-  
 թեամբ հողի տակ մի թաղէք. հողին տակ գրուած ա-  
 մեն բան չի բուսիր, և դիւրին չէ զայն դուրս բերել նո-  
 րէն. դրամատունն շատ անգամ ամենէ ապահով տեղն է  
 դրամ պահելու համար: Հ. Է.

ԳԱՂԹԵ՞ՆԻՔ

Գաղթելն ինքնին չարիք մ'է: Ժողովուրդ մը գաղ-  
 թելով կը քանդէ այն՝ ինչ որ շէն էր, և ինչ որ դարերու  
 հարստութիւն էր: Հայ ժողովուրդն՝ հեռանալով Հայրենի-  
 քէն՝ աւերման մասնած կը լինի իր միակ ժառանգութիւ-  
 նը. — հնութիւններով և յիշատակներով լի Հայաստանը:

Գիտեմ ծանր են այն պայմանները, որոնց տակ կ'ապ-  
 րի Հայն Հայաստանի մէջ. այդ իսկ պատճառաւ ցուպը  
 ձեռին բռնել և ծննդավայրէն ու Մայրենի հողէն հեռա-  
 նալը՝ օրուայ խնդր դարձած է: Սակայն հարցնենք ան-  
 գամ մը պանդխտութեան ցուպը այդքան յօժարութեամբ  
 ձեռք առնողներուն, թէ գիտե՞ն ո՛ւր կ'երթան, ի՞նչ նը-  
 պատակաւ, ի՞նչ են յաջողութեան պայմանները այն երկ-  
 րին՝ ո՛ւր կը դիմեն: Հարկերն մէկը՝ հազիւ կարող պի-  
 տի ըլլալ որոշ պատասխան մը տալ, մնացեալները Աստուած  
 ողորմած է՝ ով պիտի բաւականանան:

Ամերիկայի մէջ ունեցած հինգ տարուայ փորձառու-  
 թիւնս ինձ ըսել կուտայ, թէ «Աստուած ողորմած է» ով  
 փոր չի կ'ըտանար. եթէ պարագաները չ'օգնեն, Աստուած  
 ալ չ'ողորմիր:

Քանի որ վերջերս Ամերիկայ գաղթելու տենդէ բռն-  
 նուած են շատ Հայեր, ուստի կ'ուզեմ կարճ կերպով մը  
 պարզել այս երկրի պարագաները:

Մենք իբրև արևելեան ժողովուրդ՝ դարերէ ի վեր իբ-  
 րև ժառանգութիւն ստրված ենք մեր որոշ զբաղումը ու-  
 նենալ և մեր գործին տէրը ըլլալ: մեզի համար ծանր է  
 իբրև գերի ծառայել տարիներով մէկու մը, և ամեն տա-  
 րեգիրու տեսնել՝ թէ մեր ուժէն (որ մեր դրամագլուխն  
 է) ահագին քանակութիւն մը պակասած է, իսկ մեր քսա-  
 կը՝ տակաւին ծակ է:

Մեր երկրի մէջ փոքր ինչ դրամ ունեցողը՝ առևտուրի  
 կ'սկսի. մի քիչ արհեստ ստրվողը՝ խանութ մը կը բանայ:  
 Հոս քանի մը միլիոնատէրեր մ'իացած՝ ահագին գործարան  
 մը կը բանան, անկէ արտադրուած ապրանքն երկրի չորս  
 կողմը ունեցած իրենց խանութներու մէջ կը ծախեն. իսկ  
 եթէ ես կամ դու յանգզինք հարկեր կամ հազար տոլա-  
 րով գործ մը սկսիլ, այս անգութները մ'մէկ մեր գործով  
 միասին կը կընեն մի քանի շարժումն մէջ: Արհեստաւորին  
 անգամ պատեհութիւն չկայ այս երկրի մէջ առանձին  
 գործ սկսելու: Առաջին կարգի վարպետներն իսկ ստիպ-  
 ւած են իրենց կեանքը այսինչ հարուստի գործարանին  
 մէջ մ'աշնցունել: Հապա անգործութեան հետևանքները:  
 Հազարներով անգործներ կան, որոնք թէ և երկրի սովո-  
 րութեանց տեղեակ են, լեզուն գիտեն, մարդիկ կը ճանչ-  
 նան, բայց քանակաւ տեղ անգամ չունին: Իսկ հոս եկող  
 Հայոց մեծագոյն մասը՝ լեզուին անձնօթ, մեքենաներէն  
 չի հասկցող խեղճ ու կրակ անձինք են, և ի՞նչ պիտի ը-  
 նեն: Այս ծանր պարագաները մեր ազգայիններէն շատե-  
 րը մղած են կաշառատուութեան վատ սովորութիւնը ի-  
 գործ դնել, սակայն այս ալ անյաջող ելած է. վերակացու-  
 ներն այ սորվեցան Հայն կ'իթել. Հայն կաշառք առնելէն  
 մի քանի շարաթ վերջ՝ առարկութիւն մը բռնելով Հայն  
 դուրս կը վռնտէ, որ ստիպուի կրկին կաշառք տալ: Այս-  
 պէս Հայն կը դատի՝ Իռլանտացի կուտէ: Լինի, Չըլսի և  
 Պրայմի Հայերն քանի՛ քանի՛ անգամ դատեր վարած են  
 այս վատ սովորութեան համար: Ահա՛ այս է մեր այսօր-  
 ուայ կացութիւնը: Չը գիտեմ թէ կա՞յ մէկը, որ նախան-  
 ձի մեր վլճակին:

Ի՛նչպիսիք Նահանգս գտնուող ամեն Հայու պարտա-  
 կանութիւնն է գրել իր ազգականաց և բարեկամաց, պար-  
 զել ինքզինը և ինքզինը, որ պանդխտութեան դաւազանը  
 ձեռք չ'առնեն: Մեր մտային և բարոյական կորուստները  
 բացատրել կը թողու մ ուրիշ առթիւ:

Ս. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

ԷԼԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԽՆԻՒՐ

Ամսոյս 26ին Ս. Ոսկերբան Ե-  
 կեղեցում Սաղ վարդապետը քարո-  
 զից յետոյ ժողովուրդին յայտարա-  
 րեց Վեհափառի հեռագիրը՝ Եպիս-  
 կոպոսի ընտրութեան տոթիւ, որ  
 հեռագրուած էր նիւ Եորքի Հոգաբար-  
 ձութեան. «Վեհափառ Հայրապետը  
 մտադիր է, եթէ Ամերիկայի գաղ-  
 թականութիւնը ցանկանայ, Սարաճ-  
 եան Յովսէփ վարդապետին եպիսկո-  
 պոս ձեռնադրել և ուղարկել Ամե-  
 րիկայ՝ իբրև ընդհանուր հովիւ»:

Որքան էլ չ'ուզենք կղերական  
 հարցով զբաղուիլ, որքան էլ աշխա-  
 տենք խոյս տալ «մեռեանները իրանց  
 մեռեանները թողնեն» խնդրից, այ-  
 նու ամենայնիւ չենք կարող չ'հետա-  
 քըքըրել, որովհետև մեր ազգային  
 հասարակական առօրեայ խնդիրները  
 սերտ առնչութիւն ունին կղերակա-  
 նութեան հետ. դեռ ժողովուրդը նո-  
 րանց աղքեցութեան ենթակայ է և  
 որ և է թեմի ընդհանուր բարօրու-  
 թիւն, եղբայրական համբաշխու-  
 թիւն և կամ առևտրութիւն, երկպա-  
 ռակութիւն, մեծաւ մասամբ կախում  
 ունի եպիսկոպոսի հեռատես շրջա-  
 հայեցողութիւնից կամ ընդհակառա-  
 կը՝ թուրութիւնից, իրերը զննելու  
 տգէտութիւնից:

Այսպէս ուրեմն՝ Եպիսկոպոսի  
 խնդիրը — ընտրութիւնը, կենսական  
 հարցերից մինն է օտար հողի և ազ-  
 դեցութեան տակ պարող զանազան  
 կողմերից հաւաքուած այլ և այլ ըս-  
 կըզբունքի, այլ և այլ կուսակցու-  
 թեան հետեղ գաղթականութեան  
 համար. և արժէ, որ ոչ միայն նիւ  
 Եորքի, այլ և Ամերիկայի ցրեալ  
 գաղթականութիւնը ամենայն բարե-  
 խընձութեամբ վերաբերի այս կեն-  
 սական խնդրին. պէտք է ընտրելի  
 Եպիսկոպոսի կրթութեան, գործու-  
 նութեան և վարչական ընդունա-  
 կութեան հետ ծանօթացնել ժողո-  
 վուրդին ու մասնակից անել ընտ-  
 րութեան, և ոչ թէ ամբողջ գաղ-  
 թականութեան բազըք յանձնել մի  
 քանի Հոգաբարձութեան, որ նորանք  
 իրանց քէֆի ուզեն անեն:

Ամիսներ առաջ, երբ եպիսկոպո-  
 սական խնդիրը ՏԻԳՐԻՍԻ քաղաքակ  
 հանց, երբ երկու կրթեալ, վարչա-  
 կան ընդունակութիւններով օժտուած  
 եպիսկոպոսներին՝ Սորէն Ստեփանէ  
 և Մուրատեան, իրանց համառօտ կեն-  
 սագրութեամբ գաղթականութեան  
 առաջարկեց, շատերը այս առաջար-  
 կութիւնը իրանց շահերին հակառակ  
 գտնելով իրարանցման ինկան, ահա-  
 գին աղմուկ հանեցին ու միանգամ  
 մայն առաջարկութիւնը վաղաքամ  
 և աննպատակաբար հռչակեցին.  
 բայց այժմ խնդիրը պահանջ է դար-  
 ձել և շուտով վերջնական լուծում  
 կ'ստանայ, միայն պէտք է լաւ խոր-  
 իլ և տար չափել՝ մէկ կտորէ, գի-  
 տակցօրէն վերաբերել, բարեխըզ-  
 ճութեամբ քուէ տալ և արժանաւո-  
 րին, որ յետոյ չ'զղջանք. . .

Ի՞նչ վերաբերում է Սարաճեան  
 վարդապետին: Ոչ նորեկ, այլ նախ-  
 կին Հայերը ծանօթ են նորս գործե-  
 րին, պաշտօնավարութեան և հասա-  
 րակութեան մէջ տեղի տուած աղ-  
 մուկները և երկպառակութեան հետ-  
 լինելը ենք համարում մասնացոյց  
 լինել այն փաստ վերաբեր, թէ իբ-  
 յայտատուութեամբ հեռացեցաւ,  
 կամ ստիպեցաւ հեռանալ Ամերի-  
 կայից: Բայց աւելորդ չենք համա-  
 րում, ի գիտութիւն հասարակու-  
 թեան, մասնացոյց անել նորս թոյլ  
 գործերը Պարսկաստանում, թէ իբ-  
 րև ականատես և թէ Մշակի միջո-  
 ցով ծանօթ:

93-94 Թուականներն Սարաճեան վարդապետը անպաշտօն անցնում է

Պարսկաստանի Ս ա լ մ ա ս գ ա-  
ւառը. այդ ժամանակ՝ տեղի ժո-  
ղովուրդին հովուում էր Արսէն Վե-  
հուհի նորընծայ վարդապետը. Սաբ-  
մաստցիները սաստիկ դժգոհ էին նո-  
րանից, որովհետեւ առանց ժողովուր-  
դի կամքին՝ տիրացու ուսուցիչներով  
չցրել էր գիւղական դպրոցները. ժո-  
ղովուրդը չէր ուզում տիրացուներին  
ուսուցիչ անել. վերջինս Սարաճեանի  
խորհրդով ուստիականական շատ  
խստութիւններ գործադրեց և բռնի  
հնազանդեցրեց ժողովուրդին. նոյն  
թուականին թաւրիզի թեմը թափուր  
էր. Վեհափառը կարճ ժամանակի  
համար տեղապահ կարգեց Սարաճե-  
անին՝ մինչև յարմարագոյն Եպիս-  
կոպոս ուղարկելը. և շնորհիւ Սա-  
րաճեանի երկերեսութեան՝ թաւրիզի  
երկթաղ Հոգաբարձութեան մէջ  
երկպահանջութիւնը սուր կերպարանք  
առաւ. դպրոցներից հետզհետէ հե-  
ռացեցան յառաջիմաստէր ուսու-  
ցիչները, և նորանց տեղը հաստատե-  
ցան յետադիմական տիրացու ու-  
սուցիչները, դպրոցների փայլը նուե-  
մացաւ. փայտակարան հայաշատ գա-  
ւառը, որ ընթացում է թափա-  
ռաշրջիկ ցեղերով, և ենթարկեցաւ  
խիստ հարստահարութեան. գիւղա-  
ցիները դուռնադուռ դիմում էին  
Սարաճեանին: Սա իբրև ժողովուրդի  
ներկայացուցիչ՝ շնորհիւ իր թոյլ,  
տատանուող բնաւորութեան, չ'կարո-  
ղացաւ ոչ մի ապահովութիւն ձեռք  
բերել Շահի բարեհաճ կառավարու-  
թիւնից փայտակարանացոց համար:  
Փայտակարանի օրինակին հետեւելով  
հետզհետէ միւս գաւառները են-  
թարկեցան խստութիւնների. իսկ  
Սալմաստը գրեթէ ամայացաւ, որով-  
հետեւ Սարաճեան անկարող էր Ա-  
տրապատականի թեմի աւանդական  
իրաւունքների գործութեամբ Հայ ժո-  
ղովուրդի բարեկեցութեանը նպաստե-  
նել. վերջապէս Ատրապատականի Հա-  
յերի տրտունջը սահմանից անցաւ  
Սարաճեանի դէմ, և գրեթէ բռնի  
դուռն արին թաւրիզից: Շատ երկար  
կ'տանէր մեզ եթէ մի առ մի թեմերը  
Մշակի թղթակցութիւնները թաւրի-  
զից: Սարաճեան վարդապետ նոյնն  
է և նոյնը պիտի մնայ, և մենք չենք  
կարծում որ Եպիսկոպոսական տիտ-  
ղոսը նորան բարեփոխէ. ուստի նորա  
թեմեկանութիւնը դուռն ձգելու է.  
Ամերիկային կ'վայելէ ուսումնական,  
խելացի և վարչական ընդունակու-  
թիւններով օժտուած հովիւ, և մենք  
համոզուած ենք, միակն է Սորէն Ըս-  
տեփանէ՝ համալսարանական լեզուա-  
գէտ Եպիսկոպոսը այդ պաշտօնին,  
որ այսօր անպաշտօն փոստում է վան-  
քի խորքում:

Հ. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ

ԹՂՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ ՏԻԳՐԻՍԻ

ՓՐՕՎԻՏԵՆՍԻ ԿԱՐՄԻՔԸ

Յունիս 26, Փրովիտէնս.  
Ամերիկայի Հայոց ընդհանուր Հո-  
վիւ մը խրկելու համար՝ ամենայն  
Հայոց Վեհափառ Հայրիկը հեռագիր  
տուած է ի նիւ Երթը՝ Ամերիկեան  
Հայ ժողովուրդին հաւանութիւնը  
առնելու համար Սարաճեան վար-  
դապետի մասին: Այս առթիւ Կիրա-  
կի առաւօտ ժողով մը գումարեց  
Հայր Վաղինակ վարդ., ուր ներկայ  
էին Փրովիտէնսի 550ի չափ ազգա-  
յիններէն միայն 70 ը. նկատելով որ  
սոյն օրինակ մի խնդիր ընդհանուր  
ժողովուրդի գէթ կէսէն աւելին ներ-  
կայութեան կը կարօտի, ուստի մնաց  
երկուցեան ժողովոյն: Ընդհակառա-  
կը այս անգամ 50 անձինք միայն Ե-  
կաժէին: Ասոր գաղտնիքը մարդ չի  
գիտցաւ. թերևս օրին սաստիկ տա-  
քութիւն էր պատճառը...

Խնդրոյն վրայ թեր ու գէժ խօսելէ  
յետոյ, ինչպէս առաւօտ, նոյնպէս  
այս ժողովոյն մէջ, չի կրցին որոշ  
եզրակացութեան մը հասնիլ. ուս-  
տի մնաց Հոգաբարձութեան վրայ:  
Բ.

ՈՒՍԹՐՐՑԻՈՑ ՈՐՈՇՈՒՄԸ

Ուսթըր, Յունիս 27.  
Անցեալ Կիրակի յատուկ յայտա-  
բարութեամբ քաղաքիս Հայութիւնն  
հրաւիրուած էր ի Ս. Փրկիչ եկեղե-  
ցի, ուր պիտի կարդացուէր Վեհ.  
Հայրիկէ եկած հեռագիրն Սարաճեան  
վարդապետի մասին: Չը գիտեմ ի՞նչ  
էր պատճառն որ այսպիսի կարևոր  
ընդհանուր ժողովի մը ներկայ էին  
իբր 50 անձինք: Ժողովը բացուեցաւ  
Տ. Մաշթոց վարդապետի նախագա-  
հութեամբ, ու յետ երկար վիճարա-  
նութեանց, հաւանութիւն տրուեցաւ  
Արժ. Տ. Յովսէփ Վ. Սարաճեանի  
ընտրութեան: Հ. Թ.

ԱՆՄՏՈՒԹԵԱՆ ԶՈՂԵՐ

Փրովիտէնս, Յունիս 21.  
Քաղաքիս Պուլըթէն լրագրի անց-  
եալ Հինաշարթի աւուր այն լուրը՝  
թէ Յովհաննէս Մուրատեան անուն  
անձը 10 տարի բանտարկութեան  
դատապարտուած էր՝ կին մը բռնա-  
բարած ըլլալուն համար, ինձ գար-  
մանալի թուեցաւ, ու հետամուտ  
եղայ մանրամասնութիւններն լսել:  
Ահաւասիկ ինչ որ քաղած եմ վստա-  
հելի աղբիւրներէ:

Յովհաննէս Մուրատեան դրան  
առջև իր դրացի մէկ կնիկան հետ կը  
խօսի եղբր. այս վերջնոյ հետ թըշ-  
նամութիւն ունեցող մի ուրիշ դը-  
րացի կին՝ այս միջոցէն պատեհ ա-  
ռիթ կը սեպէ վրէժ լուծելու հա-  
մար Յովհաննէսի խօսակցէն, և ան-  
միջպէս գործարան կը վազէ՝ յիշ-  
եալ կնիկան էրիկը տեսնելու համար,  
որուն շեղածը եղածի պէս կը պատ-  
մէ մանրամասնաբար: Մարդը բոպիկ  
ու գլխաբայ սուս կը վազէ: Ճանա-  
պարհին կը հանդիպի Յովհաննէս  
Մուրատեանի, և առանց բառ մ'ըսե-  
լու կը յարձակի անոր վրայ ու մէկ  
բռնցի հարուածով դետինը կը գլորէ  
զայն. խեղճ Հայը կը ջանայ ոտքի  
երկել, բայց հարուածն աւելի կը  
սաստիկանայ, անակն որ Յովհաննէս  
դիակի մը պէս անշարժ կը մնայ:  
Բարեկամներ կուգան տուն կը փո-  
խադրեն զայն վերջէն:

Հետեւեալ օրը Հայը կը ձերբա-  
կալուի յիշեալ անձի ամբաստանու-  
թեամբ: Դատարանի մէջ, կարծելով  
թէ «յանցաւոր եմ ըսելով» կրնար  
ազատիլ, դատաւորին կողմէ իրեն  
ուզողուած առաջին սովորական հարց-  
ման հաստատական պատասխան կու-  
տայ. «Այո, Տէր դատաւոր, յանցաւոր  
եմ» ըսելով. «Ուրեմն բանտ գնա՛», որ  
մեղքդ քաւեն» կը պատասխանէ դա-  
տաւորն, ու անմիտ Հայը բանտար-  
կութեան կը դատապարտուի՝ առանց  
դատաստանի:

Յիշեալ ամբաստանող ամերիկա-  
ցին մի և նոյն օրը ատրճանակ կը քա-  
շէ ուրիշ Հայու մը վրայ: Բարեկամ-  
ներ կը խրատեն Հայը, որ ուստիկա-  
նութեան դիմէ. բայց վերջապէս հա-  
մոզուելով թէ գուցէ ինք ալ իր բա-  
րեկամին պէս գոհ երթայ այս ամու-  
տութեան, այսօր ձերբակալել տուաւ  
յիշեալ անձը, որուն դատը պիտի  
տեսնուի յառաջիկայ Սեպտեմբերին:  
ԲՈՒՐՎԱՌ

Մեր Պրայթընի Գործակալէն ըս-  
տացած ենք հինգ տղար, տեղւոյն  
մեր բաժանորդաց մի քանիներուն  
բաժանորդագիրն:

ՆՈՐԱՎԷՊ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՄԵՂ ԶՈՂԵՐ Բ.

Եթէ ապարանքդ այս պարտա-  
մուրհակով ինձ վերայ հաստատես,  
որդիք կ'ազատեմ. ապա թէ ոչ, այս  
գիշեր բանտում խեղդել կ'տամ և  
վաղը քեզ իբրև կոմիտէի անդամ՝  
որդույդ դիակի մօտ...:

Սուրէնեանը, եթէ հաւատար թէ  
վալին իր խօսքը կ'պահէ, տունը ըս-  
տանալով որդին իսկոյն կ'ազատի,  
նոյն րոպէին կ'յանձնէր, սակայն այն-  
քան խաբել էր, որ հաւատ չ'ընծա-  
յեց ո'չ խոստմանը, ո'չ սպառնալի-  
քին. այնու ամենայնիւ սպառնալիքը  
ազդեց. նա լուռ մտածում էր...:

—Ինչի՞ վերայ ես մտածում, իմ  
խօսքս խօսք է, վրայ բերաւ Վալին.  
—Ձեր խօսքը ընդունել պատ-  
րաստ եմ, պատրաստ եմ տունս էլ  
դռնել, ինչպէս ամբողջ հարստու-  
թիւնս զոհեցի. բայց վերջինս կ'ըն-  
դունիմ պայմանով:

—Ի՞նչ պայմանով. շուտ ասա՛.  
—Եթէ որդիս ազատէք, հրաման  
տաք ուղևորելու Եւրոպայ կնոջ ու  
զաւակների հետ. և երբ Մարտիլից  
ձեր հասցէով նորա նամակը ստա-  
նամ, մուրհակն ստորագրելով՝ տու-  
նը կը յանձնեմ ձեզ:

Որքո՞ ձեռքից չ'փախցնելու հա-  
մար, վալին պայմանը ընդունեց:  
Միւս առաւօտը Սուրէնեանին բան-  
տից հանց: 25 օրից Սուրէնեան վա-  
լիի հասցէով հօրը նամակ գրեց (ե-  
թէ ոչ հօր կեանքը կ'վտանգէր), և  
ուղևորեց նիւ Երթը:

Հասնելով նիւ Երթը՝ ընտանիքը  
ապրեցնելու համար նա պարտաւոր-  
ուած էր ինքզինքը նուիրել Ֆիդիլա-  
կան ծանր աշխատութեան: Սուրէն-  
եանը՝ որ վաճառական մարդ էր, այն-  
պէս էլ արաւ, ու ամիսը չ'բոլորած՝  
չ'գիմանալով Ֆիդիլական ծանր աշ-  
խատութեան (որովհետեւ սովոր չ'էր)  
հիւանդացաւ. Տիկին Սուրէնեանի հո-  
գածութեամբ փոխադրուեցաւ հի-  
ւանդանոց, ուր և կնքեց մահկանա-  
ցուն, ամենայնայնիւ չ'քաւորութեան,  
ստակալի կարօտութեան մէջ թողնե-  
լով ընտանիքը՝ կինն ու երեք փոք-  
րիկ զաւակները:

Գ

Տիկ. Սուրէնեան հեծեծալով հա-  
ռաչելով դիմեց ստորերկրեայ խու-  
ցը, անփոյթ կերպով նստեց ապի-  
ստակամածի վերայ, ծոցից հանեց ա-  
մուսնի գլխից կարած մազի փուն-  
ջերը, դրաւ առաւել և առատ արտա-  
սուք թափեց. մազը անցեալից շա՛տ  
և շա՛տ բան էր յիշեցնում. այդ  
փունջերը մի քանի բոպէում նորա  
աչքի առջ պատկերացրին անցեալի  
երջանկութիւնները՝ Երզրու մը, տու-  
նը, բարեկամները, Սուրէնեանի ծը-  
նողաց թշուառութիւնը, որոց գըլ-  
խաւոր պատճառը իրանք էին եղել.  
յանուն գաղափարի, յանուն թըշ-  
ուառ եղբայրների և քոյրերի ազա-  
տութեան՝ նա պատրաստ էր ժամե-  
րով արտասուք թափել, եթէ չ'փան-  
գարէին նորան. արդէն ընթերցողին  
յայտնի է, փոքրիկներն անօթի էին.  
նորանց դիւրագրգիռ ստամոքսները  
սաստիկ բողբոջում էին. բողբոջ, ո-  
րին մազը միայն լեցնելու ոյժ ունի:

—Մայրի՛կ, քաղցած եմ, հաց  
տո՛ւր, պոռաց վարդիկը.

—Հաց, հաց եմ ուզում, կրկնեց  
միւսը.

Երբեքայոց «Հաց եմ ուզում»ը սուր  
սլաքներն նման խոցոտում էին մօր  
սիրտը. ինչ անէր խեղճ «մայրիկ»ը,  
ի՞նչպէ՞ լռեցնէր «Հաց» խնդրող ե-  
րեխայոց. տունում հաց չ'կար, գըր-  
պանը վազուց դատարկել էր. նշանի  
նուիրական մատանին երկու շաբաթ  
առաջ ծախել՝ տան վարձին էր տել,

որի աւելցուելով մի կերպ քարշ էին  
տուել իրանց խղճուկ գոյութիւնը.  
Քեռ երէկ, քաղաքի ակնաւոր հա-  
րուսաններն, իր սկեսրայրի սրտով  
չափելով, դիմել և անսիրտ կերպով  
մերժուել էր. —Ինչո՞վ կը վերջանայ  
մեր դժբաղդ վիճակը, մտածում էր  
նա, երեսաներով թափուրեք գետը,  
վերջ տանք այս առժամ կեանքին.  
ո՛չ, ո՛չ, սոսկալի բան է անձնասպա-  
նութիւնը, աւելի սոսկալի որդեսպա-  
նութիւնը. ո՛չ, այս քայլը չ'եմ առ-  
նիլ. կեանքի պատերազմը քաղու-  
թեամբ կ'մղեմ: (Շարունակելի)

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Բ

—Լինէն վրէժ կը գրէ Յունիս 20  
թուականաւ թէ «Օրուան տենդոս  
խնդրէն Լինն ալ բռնուեցաւ վերջա-  
պէս: Որբերու հարցը ըսել կ'ուզեմ:  
Բանի մը շաբաթէ իվեր Լինի Որբա-  
խընամ Ընկերութիւնն ճիւղեր արձա-  
կել սկսած է: Մէկ երկու տասնեակով  
խմբակ մ'ունինք, որոյ մէջ մանուկ  
անդամներ ալ մուտ գտած են: Եւ  
որչա՞ր վստահ է երբ մանուկ մը ձեռք  
կը կառկարէ իւր հասակակից որբե-  
րուն: Արդարեւ խիստ քաջայերական  
է երբ ծնողք իրենց պզտիկները կ'ա-  
ռաջնորդեն այսպիսի ազգայէն նպա-  
տակներու: Առաջին քայլը առնուած  
է արդէն. մասնակցողներու եռանդն  
ու համակիրներու խանդը պահ մը  
մտածել կուտան թէ քանի մը որբեր  
ալ պիտի ազատին կորստեան վտան-  
գէն»:

—Անցեալ Կիրակի օր հանդիսաւոր  
կերպիւ տեղի ունեցաւ Տ. Տամպու-  
րաճեանի և Ե. Օր. Մարութեանի ա-  
մուսնութիւնն Ս. Ոսկերբան եկե-  
ղեցոյ մէջ: Տ. Սաթ վարդապետ  
պակի առթիւ իմաստալից քարոզ  
մը խօսեցաւ:

—Թրոյէն կը գրեն մեզ թէ՛ ամ-  
սոյս 22ին Տ. Գրիգոր Թորոսեան ա-  
մուսնացած է Ամերիկացի օրիորդի  
մը հետ: Պակը կատարած է Երեցա-  
կան եկեղեցիի երէցներէն մին:

—Քաղաքիս Հայ Աւետարանական  
եկեղեցին դաշտային հանդէս մը պի-  
տի սոյ Յուլիս 4ին Բիլթրմոնթ փառ-  
քին մէջ: Մուսըը 25 սէնթ է:

—Ուսթըրէն կը հերքեն ու կը  
բողբոջեն այն լուրին դէմ՝ թէ Տ.  
Մաշթոց վարդապետի հակառակորդ-  
ք իրենց յանցանքը խոստովանած են Ե-  
րզր Արժ. Տ. Վաղինակ վարդապե-  
տին ու խոստացած են այսուհետեւ  
խոտովութեանց պատճառ չ'ի դառնալ:

—Ուսթըրի Գրադարանի վարչու-  
թեան ու անդամական ընդհանուր  
ժողովոյ ատենակալեան մէջտեղ գըթ-  
ուարութիւններ ծագած են: Ատենա-  
պետան քանի մը ամբաստանութիւն-  
ներ ըրած ըլլալով վարչութեան դէմ,  
անդամական ժողովը յանձնախումբ  
մը կարգած է՝ այս խնդիրն քննելու  
ու տեղեկագրելու համար:

«Շարժում»՝ Լ'Առմէնիին գրուած  
նամակէ մը կ'արտասուէ. «Սուլթա-  
նը իմացեր է, կ'ըսեն, թէ Դրօշակ-  
եանները մտադիր են ընդհանուր ժո-  
ղովը գումարել Թիֆլիսի մէջ: Կը  
վախնայ որ անոնք չեւլան հոն որո-  
շում տան բռնական նորանոր արար-  
քներու: Ուստի հրամայեր է Արթին  
փաշային փութով ժընէվ դրկել իւր  
որդին Տիրան պէյը կամ ուրիշ մէկը,  
որ Դրօշակեան կուսակցութեան հետ  
բանակցութիւնները վերսկսին: Սուլ-  
թանը կը բաղձայ վերջ մը գնել ժը-  
նէվի քովի գէտի շարժմանը՝ կամ ա-  
նոնց անդամները մեծկակ գումար-  
ներու միջոցաւ շահելով, կամ անոնց  
խոստանալով մէկ քանի զիջումներ  
ընել իր Հայ հպատակներուն: Բատի-  
շակը համոզուած է, որ մինակ Դը-  
րօշակեան կուսակցութիւնը կարող է  
ազդու ձեռնարկ մը ընել»:

ԿԱՐԴԱՒ

Ինչպէս յայտնի է Հայ ժողովրդի մեծամասնութեան նիւ Երբքի Ազգ. Հոգաբարձութեան որոշմամբ Արժ. Խաչ վարդապետ իբր առժամեայ Բարոզիչ Հաստատուած լինելով պարտաւորութիւն կ'զգայ յաճախ այցելել ժողովրդոց բնակարաններն՝ զանոնք անձամբ ճանաչելու և իրենց կրօնական պէտքերն հոգալու: Սակայն տեսնելով որ նիւ Երբքի ընդարձակ տարածութեան մէջ Հայ ժողովուրդը խիստ ցրուած վիճակի մէջ կը գտնուի: Ն. Արժանապատուութիւնը հարցունելով, փնտռելով ցարդ հաղիք քանի մը Հայ ընտանեաց բնակարաններն միայն կրցած է գտնել և այցելել: Յարմար և պատշաճ է որ նիւ Երբքի և շրջակայից մէջ գտնուող Հայ ժողովուրդը, ըլլան ընտանեօք թէ՛ առանց ընտանիքի, և վերաբերին ո՛ր և է դասակարգի, հաճին իրենց բնակարանի հասցէն «փոսթիլ քարթ»ով մը ծանուցանել Արժ. Խաչ վարդապետի, որու բնակարանի հասցէն է 86 Լէկոնկիթըն Էջմիւ, նիւ Երբք:

Արժ. Խաչ վարդապետ խորհելով թէ՛ կը գտնուին այնպիսիներ, որք կը փափաքին կարևոր խնդրոյ մը համար զինքն տեսնել, հետեւալ կարգադրութիւնը ըրած է:

Ամեն օր առաւօտեան ժամը 8էն մինչև կէսօր՝ իւր բնակարանը պիտի գտնուի:

Նոյնպէս շարաթը երկու օր, այսինքն Երեքշաբթի և Հինգշաբթի երեկոյները ժամը 7էն ետքը տունը պիտի գտնուի:


ԲԱՆԱՍՏԵՂՄԱՌԻՔԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը չրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող զանոնք հըրատարակել, որոշած ենք՝ մեր ընդ ուն ամ այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարելու, կ'էջթիւրօթայի չինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն առնէ կանխաւ:

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան Հրատարակուած Հատորէն՝ երբ լոյս տեսնէ: Այս Հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»: Մանրամասնութեանց համար գրբել Լրագրոյս Խմբագրութեան:

Ե. ՂԱՒՄՐԻԿԵԱՆ,

Թիւ 628 Յրդ Աջմիւ, նիւ Երբք: Կը ծանուցանէ թէ, իբր ներկայացուցիչ Համրուաւոր մի վաճառատան,



Կարող է ծախել ամէն տեսակ հեծելանիւններ իրստ աժան գներով: Գնել փափաքողք եթէ իրեն գիտնէ գոհ կը մնան միշտ:

ԱՁԻ

Հայոց Պայտիբըլ Բլըպը վաղը Մէրիք Ռօտ (Լօնկ Այնս) պիտի երթայ: Կը հրաւիրուին անդամներն գու մարտի 27րդ փողոցի ճաշարանին առջև, առաւօտեան ժամը 10ին:


ԹՐԲԱԿԱՆ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ՍՈՒՐՃ

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ Հասարակութեան թէ թուրքիսյէն սկսած եմ ընտիր սուրճ բերել տալ՝ Հոս վաճառելու համար: Իմ բերել տուած արանքս ամենազնիւ տեսակէն է, անանկ որ միանգամ անոր հոտն ու արտօթելի համն առնող մէկը պիտի ստիպուի իմ մտաւոյն յաճախորդս գտնուի: Այս համրմամբ է որ մէկ փորձ մը միայն կը խնդրեմ արգոյ ընթերցողներէն:

Գիներս շատ գերաբաժանելի են: Հում սուրճին փաթեար 30 սէնթի կը վաճառեմ. իսկ խորոված ու թրքական Չաղացով քաշուածին փաթեար՝ 45 սէնթի միայն:

Փափաքողք Հաճին գրել ինձ հետեւալ հասցէով:

Ա. ԳԱՐԱԿԷՕՉԵԱՆ Գօսթ Թֆիս, Ուէսթ Հոպօքըն, Ն. Ճ.



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՐՈՒԹՅԱՆ

Ձերող Տպագրութիւն Մաքսուէլ Սըմրլլիւ Հրատարակիչ

Կը բաղկանայ 25 մեծադիր Հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:

Սոցա գինն՝ Կտակեայ կազմ՝ 62 տղ. 50 սէնթ Կէս կաշիակազմ՝ 87 ,, 59 Փառակազմ՝ 100 ,,

Առաջին տեսակէն կը գրկուի տնոնց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 տղար 50 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տղար, իսկ վերջինին՝ 4 տղար:

Այս Համագիրտարանն Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է. մնացեալը անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար գրբել Խմբագրութեան:

ՏԱՔ Է


Այս տաք եղանակներուն մէջ հիւանդութիւնը նուազ չեն. եթէ տաքը ձեռք ձեռք, անհոգ մի ըլլաք. բժշկի գիմնցէք: Դեղագիրներու համար հարկ չկայ այլուր երթալ. մենք կրնանք զայն պատրաստել աժան քան ո՛ր և է դեղագործ:

Ս. Բ Օ Փ Հ Օ Լ Տ, Վ Կ Ա Յ Ե Ա Լ Դ Ե Ղ Ա Պ Ռ Մ 472 Յրդ Աջմիւ, 32րդ Փողոցին մօտ: ՃԻՒՂԵՐ ունինք ի Պրուքլին և ի Լօնկ Այնս Սիթի:

Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ.

40ՇԿԱՎԱՃԱՌԵ ԵՒ 40ՇԿԱԿԱՐ, Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, նիւ Երբք.

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կոշիկներ խիստ աժան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք:



Նոր ապսպրուած կոշիկներ կը կարենք ձեւաւոր և վայելուչ կերպով: Կը նորոգենք հին կոշիկներ չափաւոր գներով: Ուրիշ մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք. — 239 Իսթ 26րդ փողոց —

ՍՏԵՓԱՆ Փ. ԲՐՈՒՏԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

25 Կրին ըսթ., Ուսթըր, Մասս.



Պատիւ ունինք ծանուցանել թէ մեր սա խանութին մէջ կը պահենք ամեն թիկեան ամէն կարգի ժամացոյցներ, շղթաներ, մատանիներ ևն.: Մեզ գիմողներն գոհ եղած են միշտ: Մեր գրինք շատ ու շատ պակաս են քաղաքումս տեղացի գ. հարստաճառաց գրինքուն: Նաև կը նորոգենք ամեն տեսակ ժամացոյցներ, կտրած մատանիներ և ստոր նման իրեր՝ չափաւոր գներով: Տարբեր քաղաքներէ ալ երբ զրկուին մեր ճիւղին վերաբերեալ վնասուած իրեր, նորոգելով նորէն կը վերադարձնենք: Գործի լուսութեան միշտ կ'երաշխտուորենք:

Հ Ի Ր Չ Օ Լ Ա

ՄԱՁԻ ԴԵՂ



Կը գործանէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադրեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը: Միանգամ փորձել բաւական է սաղեղին արժէքը շինապու համար, որ արեւելեան խոտէ պատրաստուած է յոյժ հաճելի մի համով: Կը ծախուի Բոսթոնի Գրին 50 Սթիթ միայն:

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րնկերութենէն: Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի քով, թիւ 45 Էքսէչէն ըսթրիթ, Ուսթըր, Մասս:

Հաստատուալ



Յ Ա Կ Ո Ւ Խ. Խ Է Ր Պ Է Կ Ե Ա (Ներկայացուցիչ) ՈՒՒԼԻՇՄ Պ. ԲԻՅՈՂԸՐ ԵՒ Ե Ղ Ա Ռ Ռ Յ, Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ք Գ Ի ՆԻԻ, Օղի, ողկից Ըմպիլտոն Թիւ 202, 204 Իսթ 29րդ Փողոց, Նիւ ԵՌՐ, Ն. Ե.

Պատիւ ունի ծանուցանել արդ Հասարակութեան թէ իւր վաճառած ըմպիլիքներն ոչ միայն փորձալ և անխորոշախ են, այլ և դիւրամաշելի են ամէն գոտակարգի անձանց: Այս վաճառատան մէջ կը ծախուին Երոպական, տեղական, Բալթիքորնիա և տաճկական ամէն տեսակ ուրիշ, օղի, գինի, շամբանիս, մասթիքայ, գարնջուր, պրանտի, սախիլ և այլն, իրենց ամեն տեսակներով: Փափաքողաց գներու ցուցակը զրկուի առանց ո՛ր և է ծախքի: Յանձնարարութիւնը կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ և փութով: Բաղաբին մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածնեւուն ծախքը գնողներուն վրայ է:

Ըմպիլիքներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլլէյլ անտրիթ էլ): Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպիլիքներուն, յանձն կառնենք զայնս փոխել, եթէ պակասած ու վնասուած չըլլան: Ըմպիլիքներ կը վաճառուին շիշով, կոյճով, տակառով և յատուկ անուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր: Դիմել յի կալ հասցէին կամ Ե. Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ, 535 ՈՒԷՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.

Ե. ԹԱԿԱԿԱՆ ԵՒ Պ. ԵՐԱՐԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇՄԱՐԱՆ

Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց

Պատիւ ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ միայն թէ մարտութիւն և ընտիր խոշորարու թիւն միշտ կը գնահատուի Հասարակութեան կողմէ: Միանգամ փորձելն բաւական է մշտնջենական յաճախորդ ըլլալու:

EGYPTIAN KING CIGARETTES.



Հատ անգամ իբր տաճկական ծխախոտ կը վաճառուի ժողովրդեան: Մենք մանագէտ ըլլալով այս ճիւղի մէջ, և յնդկաստան ներկայացուցիչներ ունենալով լաւ ծխախոտ բերել կուտանք մեր սիկարէթներուն համար, որք գուտ եզրիպտական ծխախոտէ շինուած են: Միանգամ փորձելն բաւական է միայն յաճախորդ ըլլալու համար: Կը վաճառուի ամէն տեղ: Կեդրոնատեղին է 52 Թրինթիթ Փլէյս, Պաթըրի Փառքին մօտ: Մի՛ մոռանաք անուշը. Էճիփըն Գինի Սիկըրէթս:

Միանգամ փորձելն բաւական է մշտնջենական յաճախորդ ըլլալու: